




40 ՓԱՐԱ

ԱՅԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՐԱ 40

ՀԱՆԴԵՍ

ԾԱՆԿ արարը երկու անգամ կը հրատարակուի Զորեհար-
քի եւ Զարար օրերն: — Տարեկան բաժանորդագրութեան գինն է
100 դր. արժար: — Վեցամսեայն 50. — Կաւառաց համար 115 դր.
Վեցամսեայ 60. — Ծանուցման տողը 5 դր.

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել.
Առ Արսոնաշէր եւ Տնօրէն Անտոն Սախան.
Էսկի Զապրիյէ ճատտեսի Նշան ԷՖ. Պրպէրեանի Տպարանն
Խմբագրութեան յանձնուած գրութիւնք եւ չեն տուիր:

ԹԻԻ 225 Գ. ՏԱՐԻ

1889

ՅՈՒՆԻՍ 24 ՉՈՐԵՔԵԱԲԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային. — Հէք ուսանողը. — Գիտական. —
Հարսանեկան. — Քննութիւն. — Ծ. զկ. —
քաղ. — ճշմարտ իրութեան կիւղի պօրա



Յաւօք կը լսենք թէ Մայր-Եկե-
ղեցւոյ Դպրոց դասն՝ ժամակոյ լուսա-
րարեան ծանուցեալ խնդրոյն առթիւ
երկու մասի բաժնուած է:

Այս խնդրոյ մասին, որ չենք գի-
տեր ինչ պիտի ծագի, ունինք գրե-
լիք յառաջիկայ առթիւ:

ԵՐՈՒՍՈՂԵՄԷՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքիս ռուսական ընդհ. հիւ-
պատոս Պ. Մաքսիմովի սր արդէն բա-
րի գալստեան այցելութիւն տուած էր
առ Ամեն. Տ. Յարութիւն Պատրիարք
այս կիւրակէ առաւօտ վերստին եկաւ
ի Պատրիարքարան ընկերակցութեամբ
Ս. տեղեաց ռուսական առաքելու.
Թեան հոգեւոր պետ Տ. Անտօնիոսի:
Ռուս հիւպատոսն ու արչխմանտրիզը

արժանավայել մեծարանօք ընդունուե-
ցան. Պ. Մաքսիմովի նոյն երեկոյեան
համար սեղանի հրաւիրեց զՍ. Պատ-
րիարքն և Գեր. Նար-պէյ ու Երեմիա
արքեպիսկոպոսներն, յայտնելով թէ
Երուսաղեմայ կառավարիչ Վսեմ. Բէ-
շատ փաշա եւս, իւր հրաւերին վրայ,
խոստացած է սեղանակից դասուիլ:
Տ. Յարութիւն Պատրիարք ընդունե-
լով հիւպատոսին հրաւերը, կիրակի ի-
րիկուն հիւպատոսարան գնաց, ընկե-
րակցութեամբ յիշեալ երկու բարձրաս-
տիճան եկեղեցականաց: Ըթրիքէն
առաջ, հիւպատոսն իւր հիւրերը ա-
ռաջնորդեց Ռուսաց բարեպաշտական
հաստատութիւններն ու եկեղեցին զորս
այցելեցին:

Պ. և Տիկին Մաքսիմովի սիրալիր
մեծարանօք պատուասիրեցին Վսեմ.
Բէշատ փաշան, Ամեն. Տ. Յարութիւն
Պատրիարքն և Գեր. Երեմիա ու Նար-
պէյ Սրբազանները: Սեղանին վրայ, որ
բոլորովին մտերմական հանգամանք
մը կը կրէր, խօսակցութիւնք տեղի
կունենային թուրքերէն և ֆրանսերէն
լեզուներով, ըստ որում հիւպատոսն և
հիւպատոսուհին տեղեակ են թուրքե-
րէնի և Բէշատ փաշա քաջ ֆրանսա-
գէտ է: Հրաւիրեալք գիշերուան ժամ
2ին միկնեցան հիւպատոսարանէն, շը-

նորհակալութիւն յայտնելով առ Պ. և
Տիկին Մաքսիմովի:

— Ազգ. կեդր. Վարչութեան կողմէ
Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին ու-
ղեկցող պատգամաւորութիւնը թէպէտ
կը պատրաստուէր այսօր մեկնիլ Ե-
րուսաղեմէն, սակայն թէ՛ Ն. Ամենա-
պատուութեան և թէ՛ Միաբանութեան
ջերմագին ստիպմանց վրայ՝ հարկադ-
րեցաւ շարժի մ'եւս յետաձգել իւր
մեկնումն: Հետեւաբար, յունիս 14
26 չորեքշաբթի օրը սիայն պիտի կա-
րենայ մեկնիլ պատգամաւորութիւնն
և աստի պիտի ուղեւորի ի Գահիրէ:
Դոր այցելու հրաւեր ընդունած է Գեր.
Խորէն Նար պէյ Սրբազան, իւր երկու
պաշտօնակցաց Արժ. Յակոբ Սչուս վար-
դապետին ու Թորոսեան Մեծ. Յով-
հաննէս Էֆէնտի, ինչպէս և Արեւելքի
Թղթակցին հետ: Եգիպտոսի Գեր. Ա-
ռաջնորդն իզմիրլեան Սրբազան, և Ե-
րեւելի ազգայինք. մասնաւորապէս
Վսեմ Պօղոս փաշա Նուպար, Կարա-
պետ պէյ Բէյիպեան և Պօղոս պէյ Ա-
շըգեան այս մտօք խոստում առած են
պատգամաւորութեանէն, որում պիտի
սպասեն ի Գահիրէ, և այսնկատմամբ
Աղեքսանդրիոյ մէջ խնդրած էին ար-
դէն Ամեն. Տ. Յարութիւն Պատրիար-
քէն որ բաւական ժամանակ թողու
պատգամաւորութեան՝ անձամբ պա-
տասխանել իրենց եղած հրաւերին:

ՀԵՔ ՈՒՍԱՆՈՂԸ

(Իրական նորավեպ)

(Նախորդ էջից)

ԺԳ.

Այսպէս անցան տասներեւինգ սեւ օրեր. բայց այս տասներեւինգ օրերու մէջ ինչե՛ր քաջեց վատարախոտիկ պատանին, ի՛նչ դառն տառապանաց մատնուեցաւ, զորիկ ընկերներէ, զուրիկ մանաւանդ ծնողաց քաղցրիկ գգուանքներէ, ինտուած դիտէ զայդ:

Հինգշաբթի օր մըն էր. ջինջ ու պայծառ օդ մը կար. ծաղկանց բոյրն ու ղեփիւռ, շունչ շունչի խառնած կը պտտէին ամեն կողմ. Հայկ, ոյր երեւակայութեան առջեւ ամեն ինչ նոր փայլ մ'ունէր այդ օր, պահ մը մոռցաւ իր ցաւերն ու վիշտերն և պատուհանը բանալ տալով ուզեց դուրս ինչ դիտել բնութիւնը, բայց երբոր ակնարկ մը ձգեց որքանոցի սաներուն վրայ, զարմացմամբ տեսաւ դէմք մը. ոյր գծագրութիւնը ծանօթ էր իրեն. բարձր ճակատով, հանճարափայլ աչերով պատանի մըն էր դա, տասներեւինգ տարեկան ծնողազուրկ ուսանող մը, որ վանի Սրբազան առաջնորդին միջնորդութեամբ անդրկուած էր ի դաստիարակութիւն. Ձեռքը՝ ճակտին տարաւ, մանկական յիշատակ մը սրունց և յանկարծական ուրախութիւն մը դիմացը վրայ ցուցաւ: Ճանչցած էր:

Իսկոյն իր մօտ կոչեց հսկողներէ մին և քաղաքավարութեամբ աղաչեց նմա երթալ իմաց տալ Տրդատի, —այս էր ուսանողին անունը, —որպէս զի ստեղծականաւ իր ներկայութեան, գայ իր քով և այսու քանի մը խաղաղ ժամեր անցընէ այնքան տառապանաց մէջտեղ:

Գնաց սպասուորն և հինգ վայրկեան յետոյ Տրդատ Հայկի խցիկէն ներս մտաւ. երբ այս երկու տղաք իրար տեսան ասոնց միջեւ անցաւ մին այն տեսարաններէ, որք արբունք կը ներշնչէն ամենէն անտարբեր արարածներու իսկ. անմիջապէս իրար ողջագուրեցին, համբուրեցին իրար և խօսակցեցան:

— Ի՞նչպէս եղաւ որ հոս կը գտնուիս, սիրեցեալ Հայկ, հարցուց

Տրդատ արգահատական կերպիւ Հայկի ձեռները սեղմելով:

— Հիւանդ եմ, Տրդատ, սաստիկ հիւանդ եմ. չե՞ս տեսներ նիհար մարմինս և ցցուած ոսկորներս, պատասխանեց Հայկ և փութաց պտտել այն ամեն եղելութիւններն, որք անցած էին իր գլխուն վրայէն. չի մոռցաւ յիշատակել Գրիգոր ախպոր հայրագուծ գորովը, որով զինք խնամած էր անքուն իսկ մնալով գիշերները. չի մոռցաւ յիշատակել նաեւ իր ահաւոր երազն, որ այնքան սարսուռ կ'աղդէր խօսակցին:

Այս ամենքը տխրութեամբ մըտիկ ըրաւ խեղճ տղան, որ այնքան կը սիրէր Հայկը. կը յիշէր հիմակ մանկութեան օրերը, այն ոսկի ժամերն, որք անցելոյն փառացը մէջ կը նիրհէին անդա՛րձ. աւա՛ղ, կըսէր ինքնովի, ի՛նչ սեւ է եղեր մեր ճակատագիրը, որ զիս անօք և անպաշտպան այս սեւ յարկերուն տակ կը նետէ իսկ այս բարեկամ մահուան ճիրաններուն մէջ. ու կ'արտասուէր. ա՛խ, նա ալ ունէր իր սրտին ցաւերը...

Անցաւ կէս ժամ քաղցր խօսակցութեան մը մէջտեղ և երբոր հնչեց դռսանքի լրման և դասուց սկզբնաւորութեան զանգակն, Տրդատ ոտքի ելաւ իսկոյն և ամեն օր գալ տեսակցիլ խօստանալով հրաժեշտ առաւ իր վաղեմի մտերմէն:

Մէկ քանի օրեր շարունակուեցաւ տեսակցութիւնն այս վատարախոտիկ պատանեաց, որք իրենց կենաց վրայ, իրենց ճակատագրին վրայ կը խօսակցէին յարաժամ. բայց հոսկ ուրեմն այնքան ծանրակշիռ հանգամանք մ'առաւ այն, որ իմացուելով ձեռքն հաս իշխանութեան կողմէ, բժշկին իսկ հրամանաւ անմիջապէս արգիւնեցաւ տեսակցութիւնն, որ մինչեւ իսկ սաստկացնելու առիթ եղած էր Հայկի արդէն տառապագին հիւանդութիւնը:

Ափսո՛ս, ասկէ ալ կը զրկուէր նա, այս միտքարանքն ալ կը խլէին իրմէ. ալ իսպառ անյոյս և ընկճեալ կը գտնէր ինքընք, հէք տղայ...

Բայց հետեւեալ օրը կիւրակէ էր. թերեւս Յովսէփ տեսնել կուգար զինք և լուրեր կը բերէր Գրիգոր ախպոր և ընկերացը վրայ. այս յուսով և

յնտրական զառանցանաց մէջտեղ մինչեւ լոյս անդգայ մնայ:

Գուշակութիւնը չէր վրիպած. հետեւեալ օր՝ Մայր-Եկեղեցւոյ դպրաց դասը Սուրբ Պատարագ մատուցանել պիտի տար Մայր Եկեղեցւոյ մէջ, ի յիշատակ հանգուցեալ դպրապետաց, դպրաց և համայն բարերարաց յիշեալ դասուն և յաւարտ եկեղեցական արարողութեանց, հանգիսաւոր հացկերոյթ մ'եւ երաժշտական գաշտահան դէս մը պիտի ունենար հիւանդանոցին հանդիպակաց պարտիզին մէջ. և որովհետեւ Յովսէփ ալ դպրաց դասու աշխատաւորներէն կը համարուէր, անտարակոյս նա եւս պիտի մասնակցէր հանդիսին և հացկերոյթին:

Հայկ բնաւ իսկ տեղեկութիւն չունէր այս ամենուն վրայ. այլ բնազդմամբ դիտէր թէ այդ օր անպատճառ պիտի տեսնէր զՅովսէփ: Սպասեց անհամբեր և ահա ցատկեց յանկարծ իր անկողնոյն մէջէն. ծանօթ ձեռք մը իր սենեկին դուռը քերած էր. «Մըտէք» ըսաւ ու նոյն ժամայն Յովսէփ ներս մտաւ ժմտագին:

— Օհ, բացագանչեց Հայկ լսյն շունչ մ'առնելով, դալուստդ ո՛րչափ ուրախութիւն պատճառեց ինձ... էհը... հոս բոլորովին անօք մնացի, Յովսէփ. բարեկամ մը չունիմ որ հետը խօսիմ. ա՛խ... եղբայր, դիտե՛ս որչափ կը վնտուեմ այն օրերը յորս ձեր մօտն էի, ի՛նչ փոյթ եթէ մութ էր սենեակն... էհը... էհը... կամ մահառիթ էր միմտուորտը. թէեւ բնաւ չեմ կրնար գանգատիլ եղած հոգածութեանց վրայ, սակայն իրիտ դժուարին է ինձ հոս վայրկեան մը անցընել... Տե՛ս ինչպէս նիհարեցայ հոս փոխադրուելէս ի վեր...:

— Ձէ, այնչափ նիհարեցած չես, բայց հոգ մի ըներ. արդէն քիչ օրէն կաղդուրելով նորէն մեր քով պիտի դառնաս և այս քաջած տառապանքներդ երազներ պիտի ըլլան միայն. քանի մը օր եւս պէտք է կենաս, որպէս զի բոլորովին ապաքինիս. գիտեմ մինակ մնալ սոսկալի բան է քեզ համար, բայց բարեկամ մը չը կըցի՛ր գտնել ժամանակ անցընելու:

Հայկ խորին հառաչք մ'արձակեց, բայց այս հառաչք այնքան խապոտ արտայայտութիւն մ'ունէր, որ պահ

մը կարծել տուաւ թէ բոլոր կուրծքը կը կտորաւոր զայն դուրս նետելու համար և ապա յարեց .

—Ախ, Յովսէփ, երբ անցեալ օր պատուհանէն կը նայէի, աչքիս դպաւ մանկութեան ընկերներէս մին, որ Ուրբանոցի սանուց մէջ կը գտնուէր և զոր չի ճանչցայ առջի բերան, բայց ապա միտքս ամփոփելով կանչել տուի զայն ու տեսակցեցանք . յետոյ խօստացաւ ամեն օր զրօսանաց պահուն այցելել զիս և խօստումը կատարեց .

—Ուրեմն, ընդմիջեց Յովսէփ. դարձեալ կրնաս շարունակել քու մանկական բարեկամութիւնդ .—բայց Հայկի աչաց մէջ արտասուաց կաթիլներ նշմարելով, սաղայն ինչո՞ւ կուլաս . . .

—Ինչ ունիս դարձեալ, յարեց շուտաւ .—Ախ, գոչեց Հայկ նորէն աղիւղորմ հառաչանք մը հանելով, հիմակ բոլորովին զուրկ մնացի ամեն սփփանքէ . հոգաբարձութիւնը զիս դարմանող բժշկին հրամանաւ արգելեց մեր կարճատեւ տեսակցութիւններն, որք միակ մխիթարութիւններս էին . ինչպէս չի լամ, ինչպէս չի հեծեծեմ . հիմակ բոլորովին դատապարտուած եմ միևնուրիկ մնալ սենեկիս մէջ, անկողնոյս վրայ, բանտարկեալի մը նման, սրչափ դառն վիճակ . . .

Եւ արդարեւ դառն էր Հայկի վիճակն, սրպէս կը բացագանչէր . քանզի զուրկ մնացած էր ոչ միայն ծնողաց ներկայութենէն, այլ և բարեկամաց իսկ տեսութենէն .

Յովսէփ, որ զգայուն սիրտ մ'ունէր ինք եւս պիտի լար, Հայկի արցունքները տեսնելով . բայց նորա ցաւերը դառնացնելու գաղափարը ցամքեցուց աչացը մէջ արցունքի չիթերը . ջանաց մխիթարել զայն, զուարճարանական խօսքեր ըրաւ, հանդարտեցնելու համար նորա սիրտն, որ յաճախ կը տրորուէր . չի մոռցաւ պատմել թէ ինչ պատճառաւ զինքը այցելած էր, թէ Դպրաց Դասը Ս. Պատարագ մատուցանել տուած էր Մայր-Եկեղեցւոյ մէջ, թէ յաւարտ եկեղեցական արարողութեանց դաշտահանդէս մը ունեցած էին հիւանդանոցի պարտիզին մէջ և թէ ինք եւս մասնակցած լինելով այս հանդիսին անտես ըրած չէր զինքը .

Խօսակցեցան ու խօսակցեցան . կարծես իրարու խօսքերէ չէին կշտա-

նար . բայց օ՜ր կը տարածամէր, մայրամուտ արեւուն յետին ցուքերը տակաւ կ'անհետանային լեռանց կատարներու ետին . գիշերը վար կիջնէր յերկնից . . .

Ուստի Յովսէփ ոտքի ելաւ իսկոյն ու ամեն կիւրակէ գալ զինք ահանել խոստանալով բաժնուեցաւ Հայկէն, տխուր տպաւորութեամբ համակուած .

(Շարունակելի)

ԳԻՏԱԿԱՆ Կ. ՍԻՄԵՅՇԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

Ջ. Ն. Աղադէմբան և հնդկական խաղ .— Պիւֆօն և Պաօլլե Սէքուառի փոփոխութիւններն .— Թոքոխտուորին նշաններն .

Դար մ'առաջ, գիտութեանց աւելանալու նշանաւոր անդամներէն մին, Պիւֆօն, կ'ըսէր թէ՝ կենդանեաց վրայ մարդուս ըրած ամենամեծ տիրապետութիւնն ձիւնն է, այն չորքոտանի անասնոյն որ ամէն ծառայութիւն կը մատուցանէ . Պիւֆօն այս գեղեցիկ վճիռը արձակած ժամանակ, չէր կասկածիր բնաւ թէ՝ դար մը վերջ, 1889 ին, իւր գաղափարներն բոլորովին կերպարանափոխ կրնան ըլլալ .

Գիտութեանց դասախօսներէն մին, Պ. Պաօլլե Սէքուառ յարուցած է սոյն յեղափոխութիւնն և ձիւնն տեղ դրած է ուրիշ անասուն մը, չափազանց վնասնէն, հնդկական խոզն .

Մի խնդա՛ք, կաղաչեմ այս փոփոխութեան վրայ որ այնքան արդարութեամբ լի է : Եթէ կարգացած ըլլայինք Պ. Պաօլլե Սէքուառի առ գիտական ճեմարանն յղած տեղեկագիրն, չը պիտի ծիծաղէիք և ինձ նման պիտի համոզուէիք որ ձիւնն աւելի մեծ ծառայութիւններ մատուցանող կենդանի մը կայ և այդ հնդկական խոզն է :

Պիտի թուեմ խոզին օգուտներն . Ագարակին մէջ ուր կ'ապրի ընտանի ճագարին հետ, համեստ խոզն մուկերը կը հեռացնէ, խոհանոցին մէջ, կուտայ մեղ ընտիր խորտիկ մը որ կը պատրաստուի իւր մսովն և որուն աճենքս ալ կը ցանկանք . . . բնախօսական լազուս Խոստան մէջ կը տուկայ ամեն փորձերու և դէմ կը դնէ ամէն

ցաւոց : Այս բազմադիմի օգուտներէն դուրս, սիրելի է նաեւ ծերունիներուն : Ծերութեան բարեկամ անասուն մ'է խոզն : Եւ ինչո՞ւ գիտէք : Նորա մէն յառաջ եկող տեսակ մը հիւթն զտեալ և մաքրուած, փոքրիկ շէնհայի մը միջոցաւ եթէ մտնէ մարդուն մաշական անօթներուն մէջ, երիտասարդութիւն մը յառաջ կը բերէ :

Վերաբուժական և բժշկական կանչն որ բնաւ կատակ չընէր պարոն աղաքէմականներուն, կըսէ թէ՝ նոյն ինքն Պ. Պաօլլե իւր անձն նոյն փորձին ենթարկելով, զգալի տարբերութիւն մը տեսած է իւր վրայ : Գիտունը որ այնքան չէր կրնար աշխատիլ և տկար ամէն մասամբ, այսօր կը վայելէ առողջ հասակ մը, կորովի անդամներ և անհուն փափաք մը ցմիշտ աշխատելու :

Հաւատա՞նք սոյն փորձոյ, ո՛րքան հետաքրքրական եւս ծիծաղելի : Ծերունի մը երբ կ'երիտասարդանայ ջընջին հեղանիւթը մը մոգական աղդեցութեան ներքեւ, ինձ համար այդ լոկ երազ մ'է : Նախնական ժամանակաց մէջ, Հռովմայեցի կոնայք ինչ ինչ նիւթեր կը գործածէին երիտասարդական հասակին վայելուչ գոյն, կենդանութիւն ունենալու համար և որովհետեւ այդ սովորութիւնն իսպառ ջնջուած է ի կանայս . ուրեմն յիմարութիւն է ըստ իմ կարծեացս հաւատալ թէ՝ խոզին մի հեղանիւթն կարող է ծերունիներն երիտասարդացնել :

Գիտէք ընդհանրապէս թոքախտաւոր անձինք ինչ յատկութիւններ կըրնան ունենայ : Սպիտակ և նուրբ մորթ, կապոյտ աչքեր, դիւրաւ քրտնող, կապուղ միս ունեցող և բարեձեւ անձինք աւելի ենթակայ կը լինին թոքախտի : Ուրիշ յատկութիւն մ'եւս պիտի ըսեմ որոյ վրայ թերեւս զարմանք յառնէք :

Ծաղիկ հիւանդութեան ենթարկուողը եւս կրնան թոքախտի ենթարկման երկիւղներ ունենալ : Պ. Լանտուզի, (այս մարդուն անունը առաջին անգամ ես կը յիշեմ) 300 անձանց վրայ փորձելով տեսած է որ տասն և մէկն ենթարկուած է թոքախտի, այն անձերու միայն որք կանխաւ ծաղիկ ենթարկուած են : Ուրեմն

երբ զայս կը կարգամ, կը մնայ ինձ լաւ խրատ մը տալ ընթերցողացս. տասն տարին մի անգամ հարկ է պատուաստուիլ և այն ատեն ո՛չ ծաղիկ, ո՛չ թոքսիտ և ո՛չ տարափոխիկ հիւսանդութիւնք կրնան մեզ մօտենալ, կեցցէ պատուաստ և ճննէն:

Մ. Գ. ՄՕՁԵՍՆ

ՅՈԹՕԿՐԱՅ

ԳԱՐԱԳԱԾԵԱՆ ՊԻԱՏԵՐԻԵՐ

ԳՈՒԼԷ ԳԱՐՈՒ ՆՕ. 677

Միւշթերիկերիմիւլի մէմնուն զըւազ, էսկիտէն պէրս մէսլէքիմիւլ օլտուղու ամ մէնին մայրամիւ տիր: Պու տէֆա էվրօթանըն էն մէհուր Փապրիգալարընտան ճէլպ տէրէք, ամբլիյէմիւլի տոնամթմըլ օլտուղու մուղտան, միւրաճապթ իտէճէք միւշթերիկէր հէր հալտէ մէմնուն գալաճաղար սըր: Գալաճ հալաճ պիլէ բէրիմ չէքիլիր: Չօճուգլար վէ չօգ տուրմաղա թէհամ մըլիւ օլմայանլար իչին, էն սան իւթիլտէ (էնսթաթանէ) ետնի միւշթերիկի եօրմաղ սըղըն բէրիմէր չէքիլիր: Պուտան մաստա Փօթօկրաֆ իչին էն մէհուր Փապրիգալարտան հէր ճինս մաքնիւ պիլ լէվաղիմթ վէ էճղա կէթիթիթիթիլու պ, էսվէն Փիյաթլէ սաթըլուր:

Միւրաճապթ իտէնլէրէ մէճճանէն տէրս վէրիլու պ, մէրազըլուր իչին 180 զրուշա գատար մաքնիւլար Փիրուլթ օլուհուր:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Հարսնիք, ահա բառ մը որ ամէն լսողի գէմքէն բռնի ժպիտ մը կը կորզէ:

Հարսնիք ընել, հարսնիք երթալ, հարսնիք տեսնել, հարսնիք վրայ խօսիլ, ամենուն ուզած բանն է և չեմք կարծեր որ ասոնցմէ խորշոլ և զգուող մէկը գտնուի: Ո և է տարիքի և աստիճանի մէջ գտնուող անձ մը. ասոնցմէ եթէ ոչ միայն, գէթ միւսին փափաքող է. ինչպէս՝ եթէ մէկը հարսնիք երթալ չուզէ, անշուշտ հարսնիք ընել կուզէ և կամ եթէ հարսնիք ընել չուզէ, անպատճառ ուրիշին հարսնիքը տեսնել կը փափաքի. վերջապէս հարսնիք բառը ուղղակի կամ անուղղակի, ամեն աստիճանի անձանց վրայ ազդեցութիւն մը ունի:

Հարսնիք ըսելով պէտք չէ հասկը-

նալ, այն կեր ու խումբերն, նուագածութիւններն, պողալ կանչներն, խաղալ խնդաններն, ցատկուտներն և Բագոսեան ղոհներն. այլ Եկեղեցւոյ այն Սուրբ խորհուրդին, Պսակի կատարումը, որ երկու ամիսներ մէկը մէկ կը միացնէ:

Ամէն ազգ և ամէն ժողովուրդ, տարբեր տարբեր եղանակներով և օրէնքներով հարսնիք կատարելու հիմնական սովորութիւնն ունին և կը կատարեն մասնաւոր հոգածութեամբ որոշեալ ատեններու, օրերու և միջին իսկ ժամերու մէջ, որովհետեւ, հարսնիք կատարելը կը նշանակէ նոր ընտանիք մը կազմել. և այս ամէն ազգի համար անհրաժեշտ է, ինչու որ առանց ընտանեկան կազմակերպութեան ազգի մը գոյութեան տեւականութիւնն անկարելի է:

Մեր ալ հարսնիք կատարելու ատեններն որոշուած և Օրացոյցին մէջ ալ նշանակուած է. օրերն ալ որոշուած է թէեւ, բայց կարծես հնաւանդ օրէնքներն ու սովորութիւններն մէկզի թողլով, ինչպէս ընտանեկան ամէն պարագայի, նոյնպէս նաեւ հարսանեկան պարագային մէջ աւանդական ընթանալու նորութիւն մը ստեղծած և ըստ այնմ ընթանալու հետամուտ եմք:

Մենք այնպէս տեսած և այնպէս գիտէինք որ հարսնիք մը չէնք շնորհ կիւրակէ օրը կը կատարուէր. կիրակի երեկոյ հարսանեկան սեղան, կէս գիշերին պսակ, երկուշաբթի առաւօտ ալ մնաս բարով երթաս բարով կըլլար կը լմնար, բայց վերջերս, կիրակի երեկոյ հարսանեկան սեղան, կէս գիշերին պսակ, երկուշաբթի առաւօտ ալ մնաս բարով երթաս բարով կըլլար կը լմնար, բայց վերջերս, կիրակի երկուշաբթի փոխուեցաւ, երկուշաբթի առաւօտ պսակ, ցերեկին սեղան (աս ալ ամեն տեղ չէ. որովհետեւ հարսանեկան սեղանի նուիրական նշանակութիւնը կորսուած է վերջերս) իրիկուան դէմ՝ հրաժեշտ. զարմանալին այն է որ խորթը հիմայ այս սահմանէն ալ չեղելու վրայ է, երկուշաբթիէն ուրիշ օրերու մէջ ալ նետուիլ սկսանք և եթէ այսպէս երթայ, ամէն օր ալ հարսնիք պիտի կրնանք ընել. ապա ուրեմն ի՞նչ հարկ կայ Օրացոյցի մէջ տեղ տեղ նշանակուած Հաւանք բառերուն, պարագայ տեղ բռնելուն, բոլորովին վերցնելու է երթալ:

Մենք տեսած ենք լուսահոգի Պատ-

րիարքներուն մի քանի հին կոնգակները, որոցմով չափ և սահման ցոյց տրուած են մինչեւ իսկ հարսանեկան ծախքերուն, զուարճութիւններուն, հարսին տրուելիք հագուստներուն ևն ևն. հիմայ թագունք աս ամեն բաները, բայց գոնէ Պսակի Ս. խորհուրդը չարթուն ո՞ր օրը, և օրուան ո՞ր ժամը կատարել հարկ լինելը սահմանող կոնգակաձեւ օրէնք մը եթէ հաստատուի, ըստ մեզ գէշ չըլլար. ինչու որ մեր դրացի ազգերն այդ օրէնքը այդ սահմանը ունին, ինչու մենք զուրկ գտնուինք և որոշեալ օր և ժամ չունենանք. կարծեմք լաւ տպաւորութիւն չընենք երբ չարթուն ալ և ալ օրերուն մէջ փոփոխները տեսնուին Հայ հարսերու կառքեր և Հայ հարսանիքներու հանդէսներ կատարուին անորոշ և անյարմար օրերու և ժամերու մէջ:

Հարսնիք մը ինձ ձեռով և ուր որ ալ կատարուի, և որչափ ալ աննշան, դարձեալ իր շրջանակի թաղեցւոյ խօսակցութեան նիւթ կը դառնայ. ասիկայ բաւական բան մը եղած է մեզ համար. ուստի ժողովրդեան բարեկեցիկ մասը ո՞րչափ զգուշանալու հարկին մէջ կը գտնուի եկեղեցական կամ ժողովրդային ընկալեալ սովորութեանց կարգէն չչեղելու, և այս ի նպաստ իրեն, աւելի չը բաժանուելու համար:

Մօտ օրերս երկուշաբթի օր մը. ժամը 4ին միջոցները հանդիպեցանք Դ.Տ հատի չափ հարսանեկան փառաւոր կառքերու, որոնք յամրաքայլ կընթանային. կառքերուն անցած փողոցի տուններուն պատուհանները գլուխներով լեցուած էր. և կերեւէր թէ, ամէն տուն նախապէս գիտակայդ կառքերուն անցնելէն, հիւրեր ընդունած և պատրաստ կուպասէին:

Կառքերն անցնելէ վերջ պատուհաններէն խուեցան հետեւեալ խօսակցութիւնը.

—Ան չէ ամա, հարսը ո՞ր առապային մէջն էր, ան խըտար տիւաթըրի չը տեսայ:

—Նա՞սըլ հարս, երկուշաբթի օրով հարս առնել կըլլայ. ան կըլլայ ամա առտուն կանուխ պսակ մըսակ կըլլայ կը լմնայ տէ, աս ատեն կառնեն կը տանին:

—Հիմայ պիւթիւն սոսանկ կընեն կոր. հէմ հաֆիֆօն կըլլայ կը լմնայ

կոր . մանչուն թարափը շիտակ ժամ պիտի իջնան . հարսին թարափն ալ պիտի երթայ , պսակը ըլլայ , անկէ հարսը առնեն տանին պիտի :

— Ստ . քու ըսածդ ինչուք ըլլայ նէ օրն ալ իրիկուն կըլլայ . ան ձգէ ետ , ես ալ առտուընէ պէրի շաշմիշ էղեր մնացեր էմ քի , առ ինչ կայ քի խալիւր կիւրիւֆ կիւրիւֆ ժամ կը կըր ուին կոր տէյի . մէյէր իսէ պսակը ժամը պիտի ըլլայ էղեր :

— Սման քուրուկ , սանքի ատիկայ աղէկ պա՛ն մըն է քի իճատ ըրին , հէմ պսակուող հարսին փէսին գէշ հէմ սլէիլի գացող ճահիլ ճիւհիլին գէշ . ծարը բնութես նէ ուր ըսես կերթայ :

— Մեղա՛յ , ատ ինչ ըսել է , սէյիր մընէ խալիւր կերթան կընեն , հարս . նիքին տէրօ՛ջը ինչ ,

— Աղէկ կըսես ամա , շիտակը ին . ծի ոսկիի մէջ ալ թաթխելու ըլլան , անխրտար ետպանճի խալիւրն մէջը չեմ կայնիր տէ պսակուիր :

— Ինչո՛ւ . ինչ գարար ունի :

— Էյ զահէր չիյտես . խալիւրն պէրանը կընա՛ս պո՛ւներ . վայն է էկեր հարսին փեսին կըլսուն , որը վար կը քաշէ , որը վեր :

— Էյ թող ժամը չը պսակուին , որի՞ հոգ . չէ նէ թող ետպանճի մարդ ներս չառնեն . իրենք իրենց պսակուին լմնցնեն :

— Աղէկ կըսես ամա , պսակ մը պիտի ըլլան տէյի ժամը ծախու առնելու չե՛ն ետ : ժամը խալիւրն է , երբ ուղէ կերթայ :

— Հա ամա քուրուկ , մէյ մը քի ֆախըր ֆուխարէն ան ֆանթաղիէնե . ըր , ան սալթանաթները տեսնելով պուլանմիշ չըլլան տէյի , մէյ մըն ալ քի հարս փեսայ եղողները օլուր օլմաղ մարդոց պէրանը չի ձգելու համար , հիչ չէնէ թաղական աղաները հարսնեւորներէն պաշխա մարդ ժամ խօթելու չեն , ինչուք քի պսակը ըլլայ լմնայ , սողրա կէնէ ժամը ժամ է , ուղողը կը մտնայ աղօթքը կընէ :

— Թամամ , թաղական աղաներուն հոգը հատեր է տէ ատանկ պարակները հիսապ պիտի ընեն , անոնց հոգըն է , ասանկ պանի մը կը նային քի ժամ մարդ էրթայ տէ քանի մը զրուշ իրատ հանեն :

— Աղէկ ամա , խալիւր պան մըն է

սէյիր ընենք տէյի կը վազէն կերթան ամա , ան սալթանաթները , սիւսերը , զինէթները ֆուխարէյին ճահիլ ճիւհիլին սիրտը թունթ կը հանէ տէ , ինչ ըսես կըլլայ , հասկցար :

— Աման տուն ալ , նայէ ինչեր հիսապ կընես , հիմա ատանկ պաներ հիսապ ընող չիկայ , խալիւր ըսուինք տէյի կը պատուտին կոր տէ , պիտի կենան ֆուխարէն պիտի մտմտան . հէ . չէ կոյնէ վալը նայէ ինչ խոյրուլիու թէվաթուրներ օրթան պիտի էլլայ :

— Հա ետ . որը հարսը սանկ էր պիտի ըսէ , որը փեսան նանկ էր պիտի ըսէ , հասըլը ամէն խաֆայէ մէյմէկ ծան պիտի ելլայ :

— Ան ձգէ , ետ հագուստ կապուս . տի լախըրտները , հարսին ֆիստանը ասանկ էր , քողքը նանկ էր , փեսան ասանկ էլմաս տուեր է . անտուկը տանողը նանկ պախշիշ առեր է . հասըլը ո՛ր մէկն ըսեմ , մեզի ֆայտա չունեցող թախըմ մը լախըրտներ , խայրի կլօս ունիս նէ օրերով մտիկ ըրէ :

— Կէնէ կըսեմ , կէնէ կըսեմ , ժամը պսակուին , տունը պսակուին , ասանկ օրթալըլը իրար անցնելու չեն , ամա շիտակն ալ նայիս նէ կէնէ խապահաթը խալիւրն է , իրենց ինչ քի կը վազեն կերթան , հարսը իմա ըլլայ եօխսա :

Այս խօսակցութեան մէջ իրաւացի և ուշադրութեան արժանի կէտ մը կայ չկայ չենք գիտեր . եթէ կայ կը յանձնարարեմք ուշադրութեան , որու որ անկ է :

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Դպրոցական քննութեանց շրջանին մէջ ենք . թէեւ Պատ . Ոոսումն , Խոր . հրդոյ որոշմամբ Ազգ . վարժարանաց ոմանց քննութիւնք Մեծ Պահոց մէջ կատարուեցան , սակայն դեռ կան շատ վարժարաններ որոց տարեկան քննութիւնք այս ամսոց մէջ կը կատարուի :

Անցեալ օր էր մենք ալ հրաւիրուեցանք քննութեան մը , գացինք , բայց քննութեան սրահը մտնելէ առաջ , ուղեցինք աշակերտաց գտնուած սրահը անգամ մը աչքէ անցունել և երբ մօտեցանք լսեցինք հետեւեալ խօսակցութիւնը , որ տեղի կունենար

աշակերտաց մէջ :

— Օն ափէլ նօմ գօլէթթիֆ , հա . ւաքական անուն կ'ըսուի . . . չէ նօմ , այն անունները . . .

— Եղբայր կամաց սերտէ , կը գո . չէ ձայն մը , մենք ալ կը սերտենք , տե՛ս մեր ձայնը կը լսուի . . .

— Բա՛հ , որի՞ն հոգը չը լսուի նէ , կուզէք նէ ամենքդ ալ բարձր ձայնով կարդայէք . . ես գաս պիտի սովորիմ :

— Ամենուս նպատակն ալ սովորիլ է արդէն , բայց ի՛նչ հարկ կ'ոյ բարձր ձայնով կարդալու և զիրար շփոթելու :

— Ամա , թեթեւօրիկ ես եղեր հա՛ . . . ականջներս խուլ են պէտք է կարդացածս բարձրաձայն լինի . . . տահա ըսելիք մ'ունիս :

— Անպիտան , ականջները չեն որ պիտի ըմբռնեն այլ միտքն՝ որ լռութիւն կը պահանջէ :

— Շիտակ է շիտակ՝ ապրիս , պո . ռաց ուրիշ ձայն մը :

— Այո՛ , իրաւունք ունի պարոնը միտքը պիտի ըմբռնէ . աղաղակեց և մի ուրիշ :

Աղմուկը երթալով կը շատանար սրահին մէջ երբ յանկարծ դրսէն ոտ . նաձայն մը լսուելով ամեն ոք լռեց պահ մը , զի մի գուցէ կառավարիչն լինի . բայց ոչ՝ իրենցմէ մին էր որ քննութեանէն կը դառնար , ուստի աղմուկն կրկին ի բերան առնելով սկսան հարցումներու կարկուտ տեղացնելնուրեկին գլխուն :

— Ի՛նչ , պարոն , ի՛նչ հարցուցին :

— Ի՛նչ թիւ աւիր պարոն :

— Ինչ առաւ նէ առաւ ձեզի՞ ինչ պէ . . .

— Հոս եկուր պարոն , ինչ հարցուցին . . .

— Էյ սուս եղիք որ պատասխանեմ . . . կ'ըսէ նորեկը ձանձրացած :

— Սո՛ւս եղիք , պիտի ըսէ , կը պո . ռայ ձայներու խառնուրդ մը :

— Էյ սու՛ս եղիք . . . վա՛յ անպիտաններ . . . սո՛ւս . . .

— Սո՛ւս . . . ժամ մ'ալ ուսներու փաթուղ՝ պիտի մտիկ ընենք :

Տասն վայրկեան սուսերու աղմուկը բերնէ ի բերան արձագանդ գըտնելէ յետոյ , պարոնը կ'սկսի խօսիլ .

— Հարցուցին թէ ֆռանսերէն լեզուի մէջ երբ բայ մը արական և իգական տէր բայիներ ունենայ ի՛նչ

սեռ և ինչ թիւ կ'առնու :

— Ծօ . . . ասկէ գիւրին ինչ կայ . աղաղակեց տղայ մը :

— Է՛յ գիտցա՛ր պարոն , գոչեց ու ընչ ոմն :

— Խառնախտին մեծը առի , ըսաւ բարկացած , լռեցէք եղբարք այս ինչ խայտառակութիւն է հիմա ներսէն ինչ կ'ըսեն :

— Շխտակ է շիտակ , ըսին տղայք միարեւրան . շարունակէ պարոն :

— Պատասխանեցի թէ ըսաւ սա , բայն արական և յոգնակի պէտք է դրուի և ինչ գրին ինձ :

— Ինչ . կրկնեց իւր ընկերաց մին , ախպիսի փուճ հարցման մը համար ինչ կը տրուի :

— Անիրաւութիւն է անիրաւութիւն . . . պոռաց ուրիշ մը :

— Ասանկ բան չըլլար բողոքելու է , աղաղակեց ուրիշ մը :

— Ո՛րի պիտի բողոքես . . . ամենն ալ կողմնակցութիւն կ'ընեն կոր ըսաւ ուրիշ մը :

Այս բարեւոնական խառնակութեան միջոցին կարգին ամենէն կարճահասակ աղան գրասեղանի մը վրայ ելած՝ յանկարծ սկսաւ հետեւեալ բանախօսութիւնն ընել :

« Ընկերք :

« Թիւերու ամենեւին կարեւորութիւն տալու չէ , զի անոնց վրայ քանի որ խօսինք վիճարանութիւն մը կը յարուցանենք և կ'սկսինք թէ միմեանց և թէ պատ . Գասատուաց պատուոյն դպչիլ : Ինչ փոյթ թէ մեզմէ մին երեք միւսն հինգ և ուրիշ մը դէռ առեր են , բաւական է որ կարգերնիս փոխելու չափ յաջողած լինինք : Տղայ մը իւր ունեցած հանճարը կամ բանջարը դպրոցէն դուրս կը փայլեցնէ : Երաժշտարութեանց , կեցցէներու և քրքիչներու ձայները սկսան սրահին կամարները դղրդել :

Կարգին ամենէն աւելի խեղկատակներէն ոմանք ալ փոքրահասակ ատենաբանն իրենց ուսերուն վրայ առնելով սրահին չորս կողմը պտրտեցան և ապա յանկարծ ի գետին ձգելով զայն , սկսան իրենց հարուածներն նորա գրիտուն տեղացնել իրրեւ շարունակութիւն ծափահարութեանց :

ՏԻՇ ԹԱՊԻՊԻ

ԺՕԶԷՑ ՆԱԼԲԱՍ

Տիշ թապիպլերինն էն մահիրի օլուպ , քէնտիսինէ միւրահաաթ իտէն լէրի ազ վագրթ զարփընտա շիֆարէզեր իթմէքլէ պիհագգըն խօշնուտ իթմիշ օյան ժօզէֆ Նալբաս էֆ . Սիրքէճիտէ Թրամվայ ճատտէսինտէ ՏույուՆու Ումոււմիյէ իտարէսի գարչըսընտա 8 նոււմէրօլը մահալը մախսուստու պուլունմագաա տըր :

Թապիպլը մուսաիլէյհ զայէթ մահիրանէ պիր սուրէթտէ իմալ էլլէտիկի տիշլէրի էհվէն ֆիյաթլա ֆիրուսթ իթտիկի կիպի , միւշթէրիլէրինն քէմալը հիւրմէթ վէ նէզարէթլէ գապուլ վէ տիշ խասթալըղլարընր հիւսնիւ թէտալի իտէրէք , ճիւմէնին մէմնունի . յէթինի գազանմագաա տըր :

ԾԱՂԿԱՔԱՂ

Այսօրուան ամուսնութիւնք :

— Լսեցի որ կամուսնանաս :

— Այո՛ :

— Նշանածդ հարո՞ւստ է :

— Երեսուն հալար ոսկի եկամուտ ունի :

— Սիրո՞ւն բան . քանի՞ տարեկան է :

— Վաթսուն տարեկան , բայց յիսուն կ'երեւի :

Պուշոնի անտառակին մէջ .

Գաւառներէն եկող գիւղացի մը փարիզեցոյ մը .

— Կը ճանաչէ՞ք սա պարոնը :

— Այո՛ :

— Ո՞վ է :

— Էյֆէլ :

— Զարմանալի՛ , ես շատ աւելի մեծ կը կարծէի :

Պարպէյ տ'Օռէվէլլի հետեւեալ սիրուն պատասխանն կուտար ամէն անոնց որք կը հարցնէին իրեն թէ՛ ինչու ահագէմիոյ մէջ չէր մտներ :

Եթէ մտած ըլլայի , ամէն ոք պիտի հարցնէր . « Ինչո՞ւ հոն է » և ու

րովհետեւ չեմ մտած , կը հարցնեն . « Ինչո՞ւ հոն չէ » :

Ամերիկեան շոգեկառքի մը մէջ :

Կին մը , սարսափահար և յուզեալ .

— Քօնախօք թէ՛ ու , ինչո՞ւ այսքան արագ կերթանք :

— Մի վա՛խաք , տիկին , հոսկէ երկու վայրկեան հեռաւորութեամբ որդնոտաց կամուրջ մը կայ . ուստի և պէտք է որ կարելի եղածին չափ թեթեւութեամբ վրայէն անցնինք :

Շոգեկառաց բաղխում մը տեղի կունենայ : Յաջորդ որն , ծերունի մը , հրաշքով մահուանէ աղատած , կը ներկայանայ արկածախայրն :

— Ինչ կուզէք , կը հարցնէ պաշտօնեայ մը որ դիակաց մնացորդներն ժողվելու զբաղած էր :

— Ա՛հ , ես զոհերէ մին եմ :

Պաշտօնեայն գլուխը վեր կը վերցնէ և ծերունւոյն վրայ ոչինչ տեսնելով .

— Ինչ կորուսիք , ծերուկս . ձեր կլինն , զաւակն , բարեկամ , ըսէք :

— Ո՛չ , հովանոցս կորսնցուցած եմ . Պաշտօնեայն կը փնտռէ , և կը գտնէ :

— Աւա՛սիկ , կ'ըսէ գիւղացւոյն , և այժմ երջանիկ էք , այնպէս չէ՛ :

— Զիս երջանիկ կը կարծէք : Տեսէ՛ք , խեղճ հովանոցիս կոթը կոտորե է :

Ճաշարանի մը մէջ :

Ազնուական գիւմք պարոն մը կը ճաշէ , իւր երկու կողմերն նստած են կոշտ գիւղացիներ որք իրենց անվայել խօսքերով անհանգստութիւն կը պատճառեն պարոնին :

հերկայ եղողներէն մին կ'սկսի յանդիմանութիւններ արձակել միամիտներուն վրայ :

Պարոնը լրջութեամբ .

— Կը ներէք , ոչ սա աւանակ է , և ո՛չ նա կոպիտ , այլ երկուքին մէջտեղ նստած եմ :

Վաթսունամեայ հարուստ ծերուկ , հայր երեք աղջկանց , կորսնցնելով իւր կինը , լրագրի մը միջոցաւ կիմացնէ իւր կրկին ամուսնութեան փափաքն և անունն գազանի պահելով :

Յաջորդ օրը երեք նամակ կտանայ
երեքն ալ իւր աղջկանց կողմանէ .
(Թարգմ.) Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ՃՈՒՄԱ ԻՐԹԵՍԻ ԿԻՆԻՔԻ ՊՕՐԱ

Ճիւմաա իրթէսի սապահ էրքէն
տէհէնթիլի պիր պօրա զուհուրէ կէլ-
տիկի մալիւմ տիւր . եհվմի մէգքիւր
աղշամըսը տախի հապա դայէթ գա-
րարըպ երինէ էօյլէ եաղմուր վէ տօլու
իլէ պիր պօրա զուհուրիթմիշ իսէ տէ,
չօգ սիւրմէեիպ հապա աչըմըս տըր .

Սապահ վուգու պուլան պօրանըն
թափսիլաթը շու տըր .

Սուլթան Ահմէտտէ Ագ Պըեդգ մա
հալլէսի ճամիսիլլէ Աեաօֆիա ճամի-
սի հալլիսինտէքի սէրվի աղտընա
երլտըրըմ իսապէթ իտէրէք , մէգքիւր
մինարէ իլէ ճամի էպսիեհսինին պաղը
մահալլէրի ֆէնա հալտէ խարապ օ-
լուպ , թէհլիքէաէ պուլունմագտէ վէ
սէրվի աղաճըն եարըսը տէվրիմիշ
տիր :

Պէլլէր պէյինտէ Շէհիր էմանէթի
մէհլիսի բէիսի սաաու . Ահմէտ բաշա
հաղրէթլէրինին գօնադարընա երլտը-
րըմ տիւշէրէք իւսթ գաթտա իքի օ-
տանըն չաթըսընը գըրմըշ , վէ օյ ճի-
վարտէ Հալվուգ պաղը նամ մահալլտէ
վաղը գարա աղաճ երլտըրըմտան ի-
քի բարչա օլմուշ , վէ Գուգկունճուգ-
տա քէրէսթէճի վասիլին մաթպախ
պաճասը երլտըրըմտան գէտէլէնմիշ
տիր :

Տէլամի Ալի էֆ . մահալլտէինտէ
Ալթընճը աաեիրէ միւֆէթթիլլէրին-
տէն իսմաեիլ էֆ.նին պաղչէոինտէքի
Մադրէհհի խաթունուն խանէսինին
աթը քիրիլլէրինին պաղըլարը վէ թա-
շվանը երլտըրըմտան գըրըլըպ գէտէլէն-
միշ տիր :

Խասքէօյտէ Սիւտլիճէ թէգուիւտ
սանտըղը նաղըրը իզգէթ . Բեամիլ պէ-
եին մաթպախ վէ պաճասը երլտըրըմ-
տան վէ թէրլիքճի Խաչիկին խանէոի-
նին պաճասը ըիւզկեարտան երգըլմըշ ,
վէ Մապէյնի Հիւմաեուն մուգիգասը
սանտալճըլարընտան Հիւսէեին աղա-
նըն գաեըզլա տէնիգտէ պուլունմա-
սընտան տօլաեը , գաեըգ մուաթիւա-
րէն պուլունմուշ իսէտէ քէնտիսինա-
պէտիտ օլմուշ տուր :

Ազապ գարու ճամիսինին ալէմի
էթրաֆը իչին թէհլիքէլի սուրէթտէ
գէտէլէնմիշ . շէօյլէ քի քեարկիլլին-
տէն ալըլմըշ օլուպ , էլեհվմ ճիւզի
րիւզկեարտա սալլանմագտա տըր :

Երինէ Ազապ գարուաա գարաաա
պուլունան իքի սանտալ պիրպիրլէրի-
նէ չարըլըպ գէտէլէնմիշէր տիր :

Գասըմ բաշաաա գապրիսթանտա
5-0 գատար սէրվի աղաճլարը տէվ-
րիլմիշէր տիր :

Բէօբրիւտէքի տէնիգ համամա-
րընըն իւսթիւնտէքի գարլամա չինկօ-
լարը ուշմուշ , Բանկալթիտէքի մէք-
թէպի հարպիեհինին պիր չօգ ճամլարը
տօլուտան գըրըլմըշ վէ օ ճիվարտա
պիր խանէնին տամը ուշմուշ տուր :

Սիրքէնիտէն Գատը քէօեիւնէ գար
կէօթիւրմէքտէ պուլունմուշ օլան Գա-
տը քէօյլիւ սանտալճը Եանգօ վէ համ-
մալ Գէօրգ ֆուրթունաեա թութու-
լուպ , Եանգօ գուրթուլմուշ վէ Գէ-
օրգ գաեըգ իլէ պէրապէր դարգ վէ
նապէտիտ օլմուշ տուր :

Բոււմէլի հիսարընտա պիր մափունա
տէվրիլմիշ վէ տէրունինտէքի իքի քի-
չի գուրթարըլմըշ տըր :

Բոււմէլի հիսարը իւսթիւնտէքի
թարլալարտա պուլունան գապադար
մահվ օլմուշ , վէ Գապաթաշտա բէք
չօգ աղաճլար եէրէ սէրիլմիշ տիր :

Բոււմէլի հիսարը աղընթըսնտա
պուլունան պիր գաեըզա երլտըրըմ
չարըլըպ գաեըգ պաթմըշ վէ գաեըգճը
նապէտիտ օլմուշ տուր :

Էյիպտէ պիր խանէ երգըլմըշ վէ
Հալըճը օլլունտա պիր գաեըգճը նա-
պէտիտ օլմուշ տուր :

Այվանսէրայ իսկէլէսինտէ պաղը
5 վաբօր ըիւզկեարտան Բիրի բաշաեա
գատար սիւրէքլէնիպ , թէնթէլէրի եըր-
թըլըպ տէնիգէ տիւշմիւշ տիւր :

Իսթանպօլտա Սուլու մանասթըր
ճիվարընտա պիր խանէեհ երլտըրըմ
տիւշիւպ թափանը գէտէլէնմիշ վէ պու-
րօ իլէ ախանը գըրմըշ տըր :

Արնափուտ քէօյլիւնտէ Բոււմ քիլի-
սէսինին պաղչէսինտէքի աղաճլարա
եըլտըրըմ տիւշմիւշ տիւր :

Պէպէք պաղչէսինտէ իքի աղաճ
տէվրիլէրէք եէմիշճի Լէօնըն տիւք-
քեանընը երգմըլար վէ մէրգոււմ իլէ
չըրաղը կիւճ հալ իլէ ճանլարընը գուր-
թարմըլար տըր :

Պէօյօղլունտա գապրիսթան սէրվի-
լէրինտէն վէ Փէնէրտէ պիւեիւք չընար
աղաճլարընտան եէրէ սէրիլմիշէր տիր :

Հահա բէք չօգ վուգուաթ օլուպ
պաղը աաալարտա տէնիգտէ պօղուլ-
մագ վէ երլտըրըմտան թէլէթ օլմագ
րաաոտէսինտէ իքէն , կիւճ հալ իլէ
թախլիս օլունմուշար տըր :

ԹԱՅԹԱՊԻԹԻ ԻԼԱՃԸ

Թահթա գուրուլարը պուլունան ա-
րալըքլարա իչպու իլաճտան սիւրիւլ-
տիւկիւնտէ , պուլունան թէքմիլթահ-
թա գուրուլարը քեամիլէն մահվ օլուր :

Սաթըլըր Պահչէ գարըսընտա Գիւ-
չիւքեան պիրաաէրլէրին էճգախանէ-
սինտէ , Պէօյիւքտէրէտէ վէ Սարըեար
էճգախանէլէրինտէ , գալթուր 5 ղըշ :

Ա Ջ Դ

Հաւաաք , Յոյս , Վէր անուն բա-
րոյալից թատերգութիւնը կազմեալ
կը վաճառի ամեն Հայ գրափաճառաց
քով , գինն է 3 դահեկան :

ԱՂՕԹԱԳԻՐՔ
ՊԱՐՏԵԶ ՀՈԳԵԻՈՐ

ԲԱԶՄԱՊԱՅԿԵՐ
(Պէրպէրեան Տպագր.)

Ընտիր թղթի վրայ , մաքուր
տպագրութեամբ , լաթա-
կազմ , կը վաճառուի

Երկու { 2 } ղրուշ

Կը գտնուի Պէրպէրեան
Տպարան , Կ. Պ. Էսքի Զապ-
թիէ ճատտէսի , թիւ 61 :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՅՑԵՏՈՄՍ

Լաւագոյն քաւթօնի վրայ աի
մէն լեզուաւ կրպատորաստուլ .
գին 100 հատը 10 գհէկն
պէտք ունեցողները պէտք է
գիմեն Գ. Պաղտատլեան տը-
պարան Յակօբեան խան .
թիւ 13 Կ. Պոլիս :

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Յօդուհ — Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Հանդիսիս տպարանէն ի լոյս ընծայուեցաւ Մեծ. Մ. Մամուրեան էֆէնտիի սոյն նոր և բազմապատկեր ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, մաքուր տպագրութեամբ և գեղեցիկ կտգով:

Փոքր մանուկները, որք քերականը աշտրտելէ յետոյ չունէին իրենց կարողութեան յարմար ընթերցանութեան գիրք մը, ահա առիկ սոյն պատկերազարդ ԸՆԹԵՐՑԱՐԱՆն սխալ ունենան այսուհետև, որով մէջ պիտի գտնեն փոքրիկ պատմութիւններ, ոտանաւորներ, հանելուկներ, պիտանի գիտելիքներ, որք գեղեցիկ կերպով դասակարգուած են աստիճանաբար:

Կը յանձնարարենք Մեծ. դաստիարակ, սոյն Ընթերցարանն, որով պակասը բաւական ժամանակէ ի վեր զգալի եղած էր և զոր կը լեցնէ բազմահմուտ ուսուցիչն:

Կեդրոնատեղին է հանդիսիս տպարանն և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով, Գինն է 2 դրշ. Շատ գնողներու գոհացուցիչ գեղջը ը լինի:

ՃԱՇՍՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Պատիւ ունիմք ծանուցանել մեր բաղձաթիւ յաճախորդաց և Սրբոյ հասարակութեան թէ շատերու ստիպմանց և փափաքանցը համաձայն, այս անգամ, մեր ի Ղալաթիա Վոյվոտաի դիմացը, արդէն ունեցած ճաշարանէն զատ, վերոյիշեալ անուամբ ուրիշ ճաշարան մը եւս հաստատած եմք Ղալաթիոյ մաքսատան գէմ,

Քէօյէ օղլու խանին տակ, թիւ 69:

Իրենց այցելութեամբը զմեզ պատուել բարեհաճող ազնիւ յաճախորդք, կերակրոց ընտրութեան, մաքրութեան և գնոց աժնութեան նկատմամբ մեր տարած հոգն ու խնամքը տեսնելով և գնահատելով խիստ գոհ ըլլալին աւերկայելի է:

ՏԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն Շ Ս Ն Պ Է Ր Պ Է Ռ Ե Ա Ն

ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մ. Զ Ա Մ Ի

Այս նշանաւոր աստիճանաբան, որ ասկէ առաջ Կամուրջի Պօլսոյ կողմը, Քիւլշիւքեան զեղարանին վրայ իւր արհեստը ի գրծ դնելով մեծ համբաւ և յաջողակութիւն ստացած էր, տեղի ունեցած հրդեհին պատճառաւ իւր դործատունը փոխադրած է այժմ Բերա, մեծ փողոց, Պօմարշէի կից թիւ 1 տանը, ուր ըստ առաջնոյն պատրաստ և իրեն դիմող յաճախորդներն զարմանել ու գոհացնել ըստ ամենայնի:

Յաճախորդաց հանգստութեան համար մասնաւոր սենեակներ կահուցուած և արհեստին փրաքերեալ նոր գործիներ յատկապէս լեբել տալով, իւր դործատունը նախկինէն աւելի ճոխ և կատարելագործեալ գիրքի մը վերածած է:

Օ Գ Ր Ո Ւ Ա Ս Ա Ն

ԿԱԼԱԹԱ ԵՒԻՔՍԷՔ ԳԱՆՏՐՐԸՍՏԱ ՎՈՅՎՈՏԱ ԳԱՐՁԸՍԸ ՆՕ. 94

ԹԵԼԵԿՐԱՖ

Պուքէրրէ Էվրօբատան պիղէ կէլէն սօն մօտա էսպտապար իշլուն եիւզտէ 40 էքօիւինէ սաթըլմագ իւզրէ սըբրիշ օլունմուշ տուր:

Ճ Ի Ե Ա. Թ Լ Ա Ր

Իւտէն'օթ քօսթիւմ ֆասօնէ	Փրանք	50	Բարթէսիւ շայաք վէ տիւզ րէ'կ ֆրանք	3
Պօնժուր քօսթիւմ ֆասօնէ	»	46	Բանթալօն շըզիլը	10
Պօնժուր քօսթիւմ րէնկի ճըզիլը	»	32	Քօսթիւմ տիւզ րէնկ կիւմիւշիւ վէ թիւթիւն րէնկի	35
Քօսթիւմ շըզիլը շայաք	»	25	Քանթալօն շիֆթէ շըզիլը	15
Քօսթիւմ շայաք տիւզ լաճիվէրտ վէ սիւան	»	30	Ելէկօթիքէ	3

